**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2**

**ԵՄ-ԳՀԱՇՁԲ-22/87 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ**

**ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

**ք. Երևան** **27.07.2022թ.**

12.07.2022-27.07.2022թթ. ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում տեղի ունեցավ փոքր մեխանիզացիայի արկղերի մոնտաժման աշխատանքների ձեռքբերման ԵՄ-ԳՀԱՇՁԲ-22/87 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

Լ. Մակարյան՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Էլեկտրամատակարարում» մասնաճյուղի պետ,

Ա. Յարայան՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Էլեկտրամատակարարում» մասնաճյուղի պետի տեղակալ,

Կ. Գրիգորյան՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Էլեկտրամատակարարում» մասնաճյուղի «Էլեկտրամատակարարում» ուղեմասի պետ,

Ս. Իգիթյան՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Էլեկտրամատակարարում» մասնաճյուղի «Էլեկտրաէներգիայի հաշվառման և վերահսկման» խմբի ինժեներ,

Ս. Թամարյան՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Էլեկտրամատակարարում» մասնաճյուղի «Հեռուստակառավարման և էլեկտրապաշտպանության» ուղեմասի պետ:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Լ. Մակարյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Ա. Առաքելյանը՝ գնումների և մատակարարման բաժնի գնումների գլխավոր մասնագետը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հանձնաժողովը որոշեց հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Գնման հայտով սահմանված Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:
3. Ընթացակարգին ներկայացված հայտերը գնահատելու մասին:

4. Բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության մասին:

5. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:

6. Ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարելու մասին:

7. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:

8. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

9. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2022թ.-ի հուլիսի 12-ին, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում ժամը 10:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և հայտարարեց գնման հայտով սահմանված ընդհանուր գները.

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Փոքր մեխանիզացիայի արկղերի մոնտաժման աշխատանքներ (I և II-րդ գիծ) Ն433+70÷ («Գարեգին Նժդեհ» կայ. IV փակուղի) | 12192113.9 |

Ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայտ կազմել և ներկայացրել են ներքոնշյալ մասնակիցները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Մասնակցի վերաբերյալ տվյալներ | | | |
|---|---|---|---|---|---|
| | | ՀՎՀՀ | գործունեության հասցե | Հեռախոս | էլ. հասցե |
| 1 | «Գլեններ» ՍՊԸ | 00858029 | ք. Երևան, Գալշոյան 46շ., բն. 22 | +374 93327465 | tax.info2112@gmail.com |
| 2 | «ՎՈԼՏ ԱՄՊԵՐ» ՍՊԸ | 00933437 | ք. Երևան Լյուքսեմբուրգի 2-րդ նրբանցք 5-22 | 033-220-380 | info@voltamper.am |
| 3 | «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ | 00470024 | ՀՀ, Կոտայքի մարզ, 2224, գ. Ձորաղբյուր, Ամառանոցային 34 | 060-500-779 | info@ekra.am |
| 4 | «Սմարթ Էներջի Սերվիս» ՍՊԸ | 02830699 | Պարոնյան / Շ / 7 / 41 կենտրոն 0015 Երևան Հայաստան | 096 552444 | alikyeritsyan@gmail.com |
| 5 | «ԴԱՎԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ» ԱՁ | - | - | - | - |

Հանձնաժողովը գնահատեց հայտ կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված և ներկայացված են Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ.

«ԴԱՎԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ» ԱՁ-սույն գնման ընթացակարգին մասնակցության հայտով Հավելված 1-ով ներկայացվող դիմում-հայտարարությունը բացակայում էր:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 3. ԲԱՑՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՀԱՅՏՈՒՄ ՊԱՀԱՆՋՎՈՂ (ՆԱԽԱՏԵՍՎԱԾ) ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը գնահատեց բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ պահանջված փաստաթղթերը առկա են և կազմված են սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ.

**«Սմարթ Էներջի Սերվիս»** ՍՊԸ-Հավելված 2-ով ներկայացված գնային առաջարկով ներկայացված գնման առարկան չի համապատասխանում սույն գնման Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկային:

**«ԴԱՎԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ» ԱՁ** - սույն գնման ընթացակարգին մասնակցության հայտով Հավելված 2.1-ով 1-ին և 7-րդ տողերի մասով 5-րդ սյունակում նշված գումարները չէին համապատասխանում 4-րդ և 6-րդ սյունակների արտադրյալին, քանի որ գումարների լումաները պետք էր կլորացված լինեն մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը:

**«ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ** - Ընթացակարգին մասնակցության հայտով Հավելված 1-ով ներկայացված դիմում-հայտարարությունում բացակայում էր որպես իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղում նշված էր https://www.e-register.am/am/companies/1350788, մինչդեռ տվյալ հղումով ներկայացված չէ իրական շահառուների վերաբերյալ հրավերով պահանջվող ամբողջական տեղեկատվությունը: Եթե «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ն «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձ չէ, կամ եթե այդպիսի իրավաբանական անձ է սակայն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ պարտավոր չէր իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցել իր իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները, ապա դիմում- հայտարարությունը լրացնելիս «տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը» բառերը պետք էր փոխարինվեր «հայտարարագիր՝ համաձայն հավելված 1.3-ի» բառերով և ներկայացվեր իրական շահառուների վերաբերյալ Հայտարարագիրը, Հավելված 2.1-ով ներկայացված գնային առաջարկի բացվածքում 6-րդ տողում նշված արժեքների մասով առկա էր անհամապատասխանություն, մասնավորապես միավոր գին և ընդհանուր քանակ սյունակների արտադրյալը չէր համապատասխանում ընդհանուր գին սյունակում նշված գումարին:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 4. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ԱՅԼ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը:

ՀՀ դրամ

| Չափաբաժնի | | Մասնակցի անվանում | Գնման հայտով սահմանված գինը | Մասնակիցների առաջարկած գները | | |
|---|---|---|---|---|---|---|
| N | Անվանում | | | արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | Փոքր մեխանիզացիայի արկղերի մոնտաժման աշխատանքներ (I և II-րդ գիծ) Ն433+70÷ («Գարեգին Նժդեհ» կայ. IV փակուղի) | «Գլենսեր» ՍՊԸ | 12,192,113.90 | 11,484,000 | - | 11,484,000 |
| | | «ՎՈԼՏ ԱՄՊԵՐ» ՍՊԸ | 12,192,113.90 | 10,160,000 | - | 10,160,000 |
| | | «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ | 12,192,113.90 | 10,160,000 | 2,032,000 | 12,192,000 |
| | | «Սմարթ Էներջի Սերվիս» ՍՊԸ | 12,192,113.90 | 12,000,000 | - | 12,000,000 |
| | | «ԴԱՎԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ» ԱՁ | 12,192,113.90 | 24,400,885 | - | 24,400,885 |

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:
2. «Սմարթ Էներջի Սերվիս» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:
3. 20.07.2022թ. նիստը կասեցնել 1 աշխատանքային օրով և նույն օրը համակարգի միջոցով ծանուցմամբ առաջարկել մասնակիցներին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետներում ներկայացվել են արձանագրված թերությունների շտկված տարբերակները:
2. «ԴԱՎԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ» ԱՁ-ի կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել արձանագրված թերությունների շտկված տարբերակները:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1.Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը չստուգել՝ պատճառաբանված որոշման բացակայության պատճառով:

2. «ԴԱՎԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ» ԱՁ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետով սահմանված պահանջները:

3. Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով «ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի տնօրենին:

4. Համակարգի կողմից գնահատման մեջ ներառված հայտերի վերաբերյալ գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:
5. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1 | «Գլենսեր» ՍՊԸ | բավարար |
| 1 | «ՎՈԼՏ ԱՄՊԵՐ» ՍՊԸ | բավարար |
| 1 | «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ | բավարար |
| 1 | «Սմարթ Էներջի Սերվիս» ՍՊԸ | անբավարար |
| 1 | «ԴԱՎԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ» ԱՁ | անբավարար |

4. 22.07.2022թ. հանձնաժողովի նիստը կասեցնել՝ բավարար գնահատված մասնակցների հետ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման նպատակով:

5. Գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օր, ժամ և վայր սահմանել համապատասխանաբար՝ 2022թ. հուլիսի 27-ին ժամը 11:00-ին, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքի 9-րդ հարկում:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

Հանձնաժողովն արձանագրեց, որ.

1. 27.07.2022թ. ժամը 11:00-ին հրավիրված գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններին բավարար գնահատված և բանակցություններին հրավիրված մասնակիցներից ներկա էին «Գլենսեր» ՍՊԸ-ն և «ՎՈԼՏ ԱՄՊԵՐ» ՍՊԸ-ն, միաժամանակ ներկա էր նաև «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ի անունից ոմն Լիլիթ Գասպարյանը, վերջինս ներակայացել էր առանց անձը հաստատող փաստաթղթի և լիազորագրով, որը վերջինիս չէր տալիս թույտվություն ընկերության անունից հանդես գալու և նոր գնային առաջարկ ներկայացնելու համար:

2. Այսպիսով պայմանավորված գնահատող հանձնողովը որոշեց Լիլիթ Գասպարյանին թույլ չտալ մասնակցելու 27.07.2022թ. ժամը 11:00-ին հրավիրված գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններին:

3. Հանձնաժողովի նախագահը յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակեց ներկաների համար, և բանակցությունների համար սահմանեց ժամկետ՝ առավելագույնը 15 րոպե տևողությամբ:

4. Բանակցությունների շրջանակներում մասնակիցների կողմից ներկայացված նոր գնային առաջարկներն են.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի | | Մասնակցի անվանում | Բանակցություն | | |
|---|---|---|---|---|---|
| N | Անվանում | | արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | Փոքր մեխանիզացիայի արկղերի մոնտաժման աշխատանքներ (I և II-րդ գիծ) Ն433+70÷ («Գարեգին Նժդեհ» կայ. IV փակուղի) | «Գլենսեր» ՍՊԸ | 7,100,000 | - | 7,100,000 |
| | | «ՎՈԼՏ ԱՄՊԵՐ» ՍՊԸ | 7,150,000 | - | 7,150,000 |
| | | «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ | - | - | - |

5. Բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետին այլ գնային առաջարկներ չեն ներկայացվել:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. իրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշել և հայտարարել ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին

| Չափաբաժնի N | Մասնակցի Անվանում | Ընտրված մասնակցի դեպքում նշվում է "X" | Մասնակցի առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ |
|---|---|---|---|
| 1 | «Գլենսեր» ՍՊԸ | X | 7,100,000 |
| | «ՎՈԼՏ ԱՄՊԵՐ» ՍՊԸ | | 7,150,000 |
| | «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ | | 10,160,000 |

## 5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հանձնաժողովը որոշեց Ընթացակարգի որպես ընտրված մասնակից հայտարարել սույն արձանագրության 5-րդ կետով ներկայացված աղյուսակում նշված՝ իրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 6. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովին ներկայացրեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը: Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 7. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ և ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:

3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց պայմանագրերի նախագծերը: Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել պայմանագրերի նախագծերը,
2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված մասնակիցներին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ նշված ժամկետում վերջինիս կողմից պայմանագիրը չստորագրելու և պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիրը ստորագրելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ*

Լ. Մակարյան ____________

*Հանձնաժողովի անդամներ*

Ա. Յարալյան ____________

Կ. Գրիգորյան ____________

Ս. Իգիթյան ____________

Ս. Թամարյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար*

Ա. Առաքելյանը ____________